


1951



Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ
(1820-1901)

այս յօդուածին նպատակէն: Արդէն բազմաթիւ են ուսումնասիրութիւնները, կատարուած այդ ուղղութեամբ, որոնց կրնան զիմել բոլոր անոնք որ լայնօրէն հարազատ զաղափար մը կը փափաքին կազմել Ալիշան բանաստեղծին վրայ: Բայց ըսենք անգամ մ'ալ որ Ալիշան ունի բանաստեղծութիւններ, որոնց նմանը արդի ժամանակներու մէջ երբեք գրուած չեն: «Բնունի»-ի, «Տէրունի»-ի, «Տխրունի»-ի, «Հայրունի»-ի մէջ կան իրապէս երգեր, որոնց մօտենալու և ճաշակելու համար կը պահանջուի զրական գիտակցութիւն, զրական լուրջ պատրաստութիւն, ըմբռնողութիւն, և լեզուի գանձերուն մօտէն ծանօթութիւն: Ո՞վ հասկցած է լիուրի իր «Հուսկ բան առ Ոգին նուագահան»-ը, և ո՞վ ճանչցած է զայն մանաւանդ նոր սերունդի զրագէտներէն: Մին միւսէն զեղեցիկ և հոյակապ բերթուածներ են օր, իր սա կտորները. «Յիշատակ մահու և մեռելոց», «Բանք պանդխտի» շարքին երգերը ուժեղ զգացումով գրուած, «Յայգախոհ Միհրանի», «Դատաստան վագախոհ Միհրանի», «Տրդատի մահուան ողսակ մատնելի», «Տրդատի մահուան ողբերգ»-ը, «Հարսներգ»-ը, «Անդորրանք Անույ», եւն:

Հ. վահան Յովհաննէսեանի թարգմանութեամբ կու տանք հոս բանի մը հատը այդ երգերէն, պարզապէս իբր զաղափար մը բանաստեղծ Ալիշանի արտադրութեանց զանազանութեան, նկատի առնել տալով որ զիւրին բան չէ թարգմանել Ալիշանը, որ խոր է իր իմաստներուն մէջ և բարդ ձեւով իր արտայայտութիւնը իր զանազանութեան բանաստեղծութիւնը իր զանազանութեամբ:

Ալիշանեան բանաստեղծութիւնը իր զանազանութեամբ ներթափանցում է մեր գրականութեան մէջ արտադրուած ներքին. բնութիւնը, Աստուած, մարդն ու հոգեկան ապրումները, հայրենիքը ամէնէն հզօր արտայայտութիւններու հասած են իր գրչին տակ: Հոս, նկատի առնելով մի միայն այն էջերը, որոնց աշխարհաբար թարգմանութիւնը կու տանք (ուրիշ ան-

գամուան թողլով հրատարակութիւնը միւս կտորներուն թարգմանութիւնները), վրաստան եզրակացութեամբ կրնանք ըսել թէ Ալիշան գիտակցօրէն մօտեցած է իր նիւթերուն, զգացած զանոնք, վերլուծած ու յաջողապէս պատկերացուցած՝ աւելի քան ուրիշ հայ բանաստեղծ մը, աւելի քան վարուժանը, աւելի քան Թէ-քէեանը:

Ինչքան քնքուշ է օրինակի համար սա Առաւիկե կերպը, ուր հոգի մը դրած է, և մեծացած հորիզոնը իր զգացողու թեան ու տեսութեան, փոխադրելով զայն մարդկային տիեզերական խողովքին շրջանակին մէջ. խոր չէ՞ սա բացատրութիւնը զրուած ալիքներուն բերանը:

Գիտե՛ս արդեօք քե ի՞նչ կ'ուզեն
Խօս կոնակները սրտիդ,
Որ միշտ կու գան և կը ծղիւսն,
Կը մըռնեն, կը բախին.
Քրքրալով ետ կը դառնան,
Խօսիլ կ'ուզեն, խօսք չունին:

Ունեցած ենք լուսնին երգիչներ, բայց կարծեմ թէ ոչ մէկը անոնցմէ երգած է այնպէս՝ ինչպէս Լուսինեան գերեզմանացի Հայր-ին հեղինակը և ինչպէս հոս հրաշայտ-ին հեղինակը: Ինչ փափկութիւն տարակուած Լուսինեան-ը: Ինչ փափկութիւն թաւշային և ինչ զգացում, մանաւանդ վերջին տան մէջ՝ երբ լուսնի շողերուն սփոփարար քաղցրութիւնը կը ցանկայ լուռ գերեզմաններու, ուր ցաւը կը հեծէ: Ինչ առատութիւն պատկերներու. լուսնի կան «լապտեր գիշերուան», «գոհար գիշերուան», «բիւր գիշերուան», «մթու թեան զրասանգ», եւն:

Յաւի զգացումը Մոսկիի վշտերը և մանաւանդ Կարօտը երգերուն մէջ ուժգին լարերու կը հասնի. մեր բերթոյններէն ոչ մէկը այնքան լայնօրէն, արուեստագէտի ճաշակով, և այնքան խոր յուզումով վերաբերուած է հոգեկան ապրումները պանդուխտի մը, ոչ մէկը այնքան բուռն կերպով տի մը, ոչ մէկը այնքան բուռն կերպով

լսել տուած է մեզի սրտի արձագանգը սիրոյ ու կարօտի:

Երկար պանդխտութիւնը նոյն շարքէն է, և է կրկին յաւելուած մը սրտի անզուսպ յորդումին, բայց փոխանակ զգացումի պոռթկում մ'ըլլալու, է իմաստասիրական խորհրդածութիւն մը, որով նիւթը կ'ընդլայնուի հանդարտ շեշտով, մինչ Կարօտը իր ուժգին թափովը հեղեղատի մը վազքին սաստկութիւնը ունէր:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

ՆՄՈՅՆՆԵՐ ԱԼԻՇԱՆԻ ՆՈՒԱԳՆԵՐԷՆ

ԱՌՈՒԱԿԻՆ

Կը սիրեմ ես ասին առուակին
Որ սարերէն մենաւոր,
Կ'իջնէ կողերը բլրակին
Ու կը հոսի դաշնաւոր:

Տարածուելով մարգերը բաց
Կը համբուրէ ծաղիկներ,
Ալեակներն իր արտերն իջած,
Կ'ընեն հազար շրջաններ:

Թէպէտ անդորր, բայց միշտ արագ
Կը մօտենան հեղեղին,
Եւ անհամբեր ամէն ալեակ
Կը հասնի մօր կարօտին:

Ո՛վ ալեակներ, ո՛վ վրտակներ
Աշխոյժ, հեղիկ, ո՛հ ըսէք,
Միտքս ի՞նչ է իմ սիրտին:

Այդ սիրունակ կարկաշտով ձեր
Ափունքներէն ի՞նչ կ'ուզէք:

Որո՞ւ գաղտնի սուրհանդակն էք,
Չեզ կեանք տըւող ամպերո՞ւն,
Ծաղիկներո՞ւն՝ որոնց մայրն էք,
Թէ այլ է ձեր տենչն հոգւոյն:

— Այդ չենք զիտեր, բայց մշտօրէն
Քու հայելիդ ենք ճշգրիտ,
Գիտես արդեօք թէ ի՞նչ կ'ուզեն
Խօլ կոհակները սրտիդ,

Որ միշտ կու գան և կը ծըփան,
Կը մըռնչեն, կը բախին,
Քրքրալուով ետ կը դառնան
Խօսիլ կ'ուզեն, խօսք չունին:

ԼՈՒՍԻՆԸ

Ծաղկազարդուած բլուրներ, և գազաթներ ամպածրար
Դալար սիւներ, տընակներ, և երկնային վեհ տաճար,
Հովիտ ու դաշտ, և ըստուերոտ քարայրներ,
Առուակներու գեղգեղանքն, ոստերուն տակ սոխակներ,
Կ'ուզեն լուսընկան
Լապտեր գիշերուան:

Անձեւ ժայռեր, անդունդներ, և նոճիներ երկնածեմ
Առանց կեանքի լըճակներ, ու պուրակներ դէմ առ դէմ,
Անպատին հետ անեզր, բայց զընայուն և շարժուն,
Երկնքի մէջ մշտօրօր աստղերու հոյլն ասմազուն
Կ'օրհնեն լուսընկան
Գոհար գիշերուան:

Լեռներու մէջ ձիւնապատ, անցորդին հետքը թագուն,
Ծովափին մօտ հիւղակներ, ձըկնորսին կուրը սահուն,
Որդեկորոյս ծնողքներ առանց քունի հեշտութեան,
Իմաստուններ խորամուխ երկինքներու, բընութեան՝
Կ'երգեն լուսընկան
Բիրը գիշերուան:

Դու մըթութեան դըրասանգ, դուն արեգակ լուսածեմ
Ես ալ բզբեզ կը սիրեմ, իշխանուհիդ եռադէմ,
Բանակին մէջ աստղերու ըսպարապետ զրահապատ,
Հարսերուն մէջ թագուհի, հանդերձներով ոսկեզարդ:

Կ'անցնիս երբեմն մենակ ովկեաններու երկինքէն,
Նաւակ մ'ինչպէս զոգաւոր, հանդարտասահ ջրերէն,
Ճամբաներէ անձանթ ծովեր կ'անցնիս անվրթար
Նաւահանգիստներ հասնելու մեր աշխարհէն աննշմար,
Պայծառ լուսընկայ
Գիշերուան ճամբայ:

Այն տեղերն ալ չըմոռնաս, ինձ համար միշտ սիրելի,
Ուր որ չունին բնակիչներն այլեւս հեշտանքն արեւի,
Գերեզմաններն ալ գընա՛, ուր որ կ'երթան միշտ սրտերն,
Արտասուելու կըրծարախ սրտերու մօտ աներեր,
Այնտեղ գնա՛ լուսին,
Փարոս դամբանին: